



Ս. ԳԵՈՐԳ ԶՕՐԱՎԱՐ

Գեորգ զօրավար ծնած է Կեսարիա, քրիստոնեայ ընտանիքի մը մէջ: Ան չափահաս դառնալով, կը գինուորագրուի հռոմեական բանակին եւ կարճ ժամանակ մը ետք իր ցուցաբերած քաջութեան ու հաւատարմութեան շնորհիւ, կ'արժանանայ հազարապետութեան աստիճանին, երբ հազիւ երեսուն տարեկան էր ու կը դառնայ Դիոկղետիանոս կայսրին խորհրդականը:

Երբ Դիոկղետիանոս քրիստոնեաներուն դէմ հալածանքի հրովարտակը պիտի հրապարակէր, նախ խորհուրդը կը հարցնէ իր զօրավարներուն, որոնցմէ էր նաեւ Գեորգ, որ հաւատացեալ քրիստոնեայ մը ըլլալով, դէմ կը դնէ կայսրին եւ կը փորձէ համոզել զայն, որ այդպիսի հրովարտակով մը չխանգարէ կայսրութեան քաղաքացիներուն անդորրութիւնը:



Սակայն կայսրն ու զօրավարները կը հասկնան, թէ Գեորգ արդէն իսկ քրիստոնեայ է եւ կը փորձէ դարձի բերել զիրենք, ուստի ուրացութեան կը հրաւիրեն եւ բազմաթիւ չարչարանքներու կ'ենթարկեն զինք, որոնց քաջութեամբ կը դիմանայ ան:


Ի վերջոյ, Գեորգ կը յայտնէ կայսրին, թէ կը փափաքի տեսնել կուռքերը: Կայսրը խանդավառուած այս խնդրանքէն, կը տանի զայն մեհեան մը, այն ակնկալութեամբ, որ ան պիտի երկրպագէ կուռքերուն: Սակայն Գեորգ ջարդ ու փշուր կ'ընէ զանոնք: Կայսրը անմիջապէս գլխատել կու տայ քաջ զօրավարը, 303 թուին:

Ս. ԳԵՈՐԳԻ ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ

Ս. Գեորգի սրբապատկերը, որ ձիու վրայ նստած նիզակով վիշապը կը խոցէ իր իւրայատուկ խորհրդանիշը ունի: Անիկա կը նշանակէ քրիստոնեական հաւատքով չարին դէմ պայքարն ու յաղթանակը:

Ս. Գեորգի մասին աւանդութիւնը կը պատմէ, թէ ան վիշապ մը սպանած է փրկելու համար կեանքը աղջկայ մը, որ իբրեւ կերակուր յանձնուած էր անոր: Այս աւանդութիւնը կը խորհրդանշէ Ս. Գեորգ զօրավարին արիասիրտ պատերազմը եւ սատանային դէմ յաղթանակը: Բացի ատկէ՝ Դիոկղետիանոսը նոյնպէս կը կոչէին անդնդային վիշապ, որուն Ս. Գեորգ իր անսասան հաւատքով յաղթած է:

ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՖԻ ԲԵՇՈՇԵԱՆ





Գունաւորէ՛ Ս. Գեորգ զօրավարին պատկերը:

Կրնա՞ս լուծել հետեւեալ խաչբառը:

- 1.- Ծաղիկ ծախող
- 2.- Հիւանդին հոգ տանող
- 3.- Չարմանալի բաներ ընող, ձեռնածու
- 4.- Հաց եւ խմորեղէն եփող
- 5.- Ապրանք, բեռ կրող
- 6.- Գորգ վաճառող
- 7.- Ձուկ որսացող
- 8.- Կօշիկ կարող, շինող
- 9.- Անուշեղէն, կարկանդակ վաճառող
- 10.- Առեւտրական

- 10.- ղոհիտսոցոմի
 9.- սոցոմիոմշուդի
 8.- մոհիտիշօհ
 7.- ոմսղիթ
 6.- սոցոմիոմեմսե
 5.- մկիողսեյ
 4.- ղոհոտօփ
 3.- մոմտիցը
 2.- Կոտոնղուովե
 1.- սոցոմիոմիւտՁ
 :մզղղոմոմտոմ

Առաջին օրինակին պէս, իւրաքանչիւր պատկեր միացո՛ւր իր յարմար տուփիկին:



ՉԻՊԻԿԸ, ՈՐ ԼՈԳԱՆՔԵՆ ԿԸ ԽՈՒՍԱՓԵՐ



Չիպիկ ճուտիկը լուացուիլ չէր սիրեր:
Ան լուացուիլը ժամանակի կորուստ կը յամարեր:
Բայց մայրիկը միշտ կը բարկանար իր վրայ.
- Չիպի՛կ, դուն այնքա՛ն աղտոտ ես, որ քու փափուկ, դեղին ու
գեղեցիկ փետուրներդ այլեւս չեն երեւիր:

Անգամ մը Չիպիկին ընկերները՝ բադիկը, կրիան ու խոզուկը
որոշեցին իր հետ կատակ մը ընել:

Երբ ճուտիկը փողոց ելաւ ու բարեւեց ընկերներուն, անոնք
այնպէս ձեւացուցին, թէ չեն ճանչնար զինք:

- Բարի լո՛յս, կրիա՛յ,- ըսաւ Չիպիկը:
- Բարի լոյս, իսկ դուն ո՞վ ես,- հարցուց բադիկը:
- Բարի լո՛յս, Խոզո՛ւկ,- դարձաւ ճուտիկը միւս ընկերոջ
կողմը:

- Բարե՛ւ: Բայց դուն ո՞վ ես: Ես քեզ չեմ ճանչնար,- խռխռաց
խոզուկը ու միւս կողմ դարձաւ:

ճուտիկը այնքան բարկացաւ, որ չնկատեց մեծ ջրափոսը ու մէջը
ինկաւ: Այդպիսով ան անգիտակցաբար լուացուեցաւ ու մաքրուեցաւ:

- Վա՛յ, դուն այլեւս կեղտոտ չես,- բացազանչեց Խոզուկը:
- Ո՞ր էիր այսքան ժամանակ,- հարցուց Կրիան:
- Բայց ես տակաւին հիմա, նոր, ձեզ բարեւեցի: Ի՞նչ է, զիս
չճանչցա՞ք,- Չիպիկը շփոթած նայեցաւ ընկերներուն:
- Բայց դուն շատ աղտոտած էիր,- ըսաւ բադիկը:
- Շա՛տ, շա՛տ կեղտոտ,- խռխռաց խոզուկը:
- Բայց հիմա դուն որքա՛ն գեղեցիկ ես,- ըսաւ կրիան:
- Ու այնքա՛ն քնքուշ, փափուկ, դեղի՛ն,- աւելցուց
խոզուկը:

- Ա՛խ, եթէ միշտ լուացուիս, մենք քեզ մի՛շտ
կը ճանչնանք,- ըսաւ բադիկը:

- Ու երբե՛ք-երբե՛ք ուրիշի հետ չենք շփոթեր,-
ըսաւ կրիան:

Այդ ժամանակ Չիպիկը նայեցաւ ջրափոսին մէջ իր
արտացոլանքին: Եւ տեսաւ որ իսկապէ՛ս, ան որքա՛ն
դեղին ու գեղեցիկ էր:

- Յը՛մ, երեւի այսուհետեւ ես ամէն օր առաւօտեան պէտք է
լուացուիմ,- բացազանչեց ան:

- Ես չեմ ուզեր, որ ընկերներս զիս չճանչնան ու մանաւանդ
կ'ուզեմ, որ մայրիկս ալ գոհ մնայ ինձմէ...





ԱՐՅԵՍՏԱԿԱՐԺՆԵՐՈՒ ԼՈՂԱԲԱԶԱՆ

Աշխարհի ամենեն խորունկ լողաազանը հտալիոյ մէջ կը գտնուի: Անկա կոչուած է «Տիփ Ճոյ» (խորունկ ուրախութիւն) եւ 40 մէթր խորութիւն ունի:

Դուն ալ կ'երագէ՞ս անոր ջուրերուն մէջ լողալ: Դժբախտաբար մեզի համար ատիկա անկարելի է: Այդ լողաազանը յատկացուած է միայն արհեստավարժ լողորդներուն, որոնք հոն կը մարզուին: Սակայն այցելուներ կրնան դիտել զանոնք՝ ապակիով օժտուած ընդծովեայ քարայրի մը ընդմէջէն: Անկա կը նմանի հսկայական աքուարիոմի մը, ուր ձուկերուն փոխարէն՝ մարդիկ կը լողան:

